

**ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ»
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Ճշտումներ և լրացումներ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

1962 թ. Մ. Արեգյանի անվան գրականության ինստիտուտը ձեռնամուխ եղավ հայ գրականության դասական Հ. Պարոնյանի «Երկերի ժողովածուի» հրատարակությանը (10 հատորով), որն ավարտվեց 1979 թ.։ Ակադեմիական այդ հրատարակությունը, հիրավի, առաջընթաց քայլ էր մեծ հրգիծաբանի գրական-հրապարակախոսական ժառանգությունը ի մի բերելու և ժողովրդականացնելու գործում։ «Երկերի ժողովածուի» տեքստերը պատրաստող և ծանոթագրող Ա. Մանուկյանը և Գ. Ստեփանյանը (2-րդ հատոր) կազմել են մի բազմահատորյակ, որ նոր որակ է 1930-ական թթ. Պետհրատի հրատարակած՝ Հ. Պարոնյանի «Երկերի լիակատար ժողովածուի» համեմատությամբ։

Հայտնի է, որ հրգիծաբանի երկերը սփռված ձև բազմաթիվ պարբերականներում («Եփրատ», «Փող առավոտյան», «Մեղու», «Թատրոն», «Թատրոն, բարեկամ մանկանց», «Լույս», «Ծիծաղ», «Խիկար», «Մասիս», «Հայրենիք», «Արձագանք» և այլն), ընդ որում, տպագրված նաև իր մահից հետո՝ արևմտահայ և արևելահայ այլ պարբերականներում։ Արևմտահայ մամուլի հայրենական հավաքածուների ոչ լրիվ լինելը, նրա նյութերին ոչ բավարար ծանոթ լինելը (մանավանդ 60—70-ական թթ.), հասկանալի դժվարություններ պետք է հարուցեին «Երկերի ժողովածուն» հրատարակելիս։ Հետևաբար, այս պայմաններում առավել գնահատելի է նրա կազմողների լուրջ աշխատանքը։ Այսուհանդերձ, բավականաչափ շատ գործ կա անելու Հ. Պարոնյանի ց'օրս ուշադրությունից դուրս մնացած գրական ու հրապարակախոսական երկերը ամբողջացնելու բնագավառում։ Դրա անհրաժեշտությունը թելադրված է հայ գրականության ու հայ ժողովրդի պատմության, XIX դարի մեր մշակութի զարգացման մեջ Հ. Պարոնյանի ստեղծագործության բացառիկ կարևոր նշանակությամբ։

Նշված պրոցեսին զուգահեռ, պետք է ճշտվեն ու լրացվեն Հ. Պարոնյանի երկերին կցված ծանոթագրությունները, որոնք կամուրջ են հրգիծաբանին և արդի ընթերցողին բաժանող ժամանակահատվածները միացնելու համար։ Ոչ ճիշտ ծանոթագրությունները միակողմանի են դարձնում գրողի և ընթերցողի փոխհարաբերությունը, խանգարում ճանաչողության իրականացմանը։ «Երկերի ժողովածուի» մեջ, նախորդի համեմատությամբ, բավական արդյունավետ նորություններ կան այս իմաստով. ի հայտ են բերվել մինչ այդ անծանոթ ծածկանուններ, ճշտվել նյութերի տպագրության ժամանակն ու տեղը, ավելացվել տեքստի պահանջներին համապատասխան ծանոթագրություններ։ Այս տեսակետից մասնավորապես աչքի են ընկնում 2-րդ հատորի հմտալի ծանոթագրություններ (ծանոթագրող՝ Գ. Խ. Ստեփանյան) և մյուս հատորների հիմնավորված մեկնաբանությունները (ծանոթագրող՝ Ա. Ս. Մանուկյան)։

Այսուհանդերձ, Հ. Պարոնյանի երկերի սպառիչ ծանոթագրումները կապված են բազմաթիվ խոչընդոտների հաղթահարման հետ։ Նրա անսովոր լայ-

նախոհությունը, խոր գիտելիքները իր ժամանակի գրականության, արվեստի, պատմության, Թուրքիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրականության, միջազգային անցուղարձի և այլնի վերաբերյալ և, մյուս կողմից, երգիծաբանի դարաշրջանի և միջավայրի մեր ոչ կատարյալ իմացությունը, ըստ էության նրա ստեղծագործության յուրացումը դարձնում են շարունակական գործ: «Երկերի ժողովածուի» ծանոթագրումների մեջ նկատվող վրիպումները և անճշտությունները մի հայտնի շահով պայմանավորված են վերոհիշյալ հանգամանքներով: Երկերի ժողովածուի հրատարակության ավարտից մեղ բաժանում է զրեթե մեկ տասնամյակ, սակայն թերությունները մնում են. դրանք պետք է վերացվեն ժամանակի ընթացքում և դրան է հետամտում, ըստ հնարավորին, այս քննարկումը:

Ծանոթագրություններին վերաբերող մեր դիտողությունները, կարծում ենք, հաշվի կառնվեն 2. Պարոնյանի երկերի հետագա հրատարակության ժամանակ: Դրանք ներկայացվում են ըստ հատորների հաջորդականության, հատորի էջի և ծանոթագրման թվահամարի (անհրաժեշտության դեպքում՝ նաև վերնագրի) նշումով: Քննարկվում են 1, 4, 6—10 հատորների ծանոթագրությունները:

Հատ. 1

Էջ 450, ծան. 11: «Սահմանադրություն:—1860 թվականի մայիսի 24-ին հրապարակվեց Թուրքական կառավարության կողմից հաստատված Ազգային սահմանադրությունը...»:

Ճիշտ է: Կառավարությունը հաստատել է ոչ թե 1860, այլ 1863 թ. սահմանադրությունը¹:

Էջ 451, ծան. 7: «Քաղաքական... և կրոնական... ժողովների միացյալ նիստը, որ գումարվում էր 15 հոգևորականների և 12 աշխարհականների մասնակցությամբ» (նկատի ունի հառն ժողովը—Ա. Խ.):

Ըստ 1863 թ. սահմանադրության, հառն ժողով էին կազմում կրոնական և քաղաքական ժողովները, ընդ որում, առաջինը կազմվում էր 14 եկեղեցականներից, երկրորդը՝ 20 աշխարհականներից²: Ծանոթագրության մեջ սխալ է նշված հառն ժողովի հոգևորականների և աշխարհականների քանակը:

Էջ 451, ծան. 10: «Մասիս»... Հայտնի դարձավ հատկապես Ա. Արփիարյանի (1884—1889) և Գ. Զոհրապի (1892—1893) խմբագրության տարիներին³:

Ա. Արփիարյանը «Մասիսը» խմբագրել է ոչ թե նշված տարիներին, այլ 1887 թ. հունվար-հունիսին և ապա 1888 թ. նոյեմբեր-դեկտեմբերին⁴: Գ. Զոհրապը «Մասիսը» խմբագրել է ոչ միայն 1892—1893 թթ. (2. Ասատուրի հետ), այլև 1898 թ. (Սիպիլի և 2. Ասատուրի հետ)⁵:

Էջ 451—452, ծան. 11: «Մաղիկ»... Տասնօրյա հանդես, լույս է տեսել 1861—1865 թվականներին... Գ. Զիլինկիրյանի և Ա. Հայկունու խմբագրությամբ: 1865—1867 թվականներին «Մաղիկը» շարունակեց լույս տեսնել Պոլսում՝ Զարեհ Ստեփանյանի խմբագրությամբ, իսկ 1867 թ. սկզբից մինչև նոյեմբերի 1-ը Զմյուռնիայում՝ Մ. Մամուրյանի խմբագրությամբ...»:

Սխալ են զրեթե բոլոր տվյալները: «Մաղիկը» սկզբից մինչև վերջ լույս է տեսել Գր. Զիլինկիրյանի խմբագրությամբ (1861—1867), իսկ Ա. Հայկունին նրան խմբագրակից է եղել մինչև 1862 թ. հոկտեմբեր⁶: Զ. Ստեփանյանը և

1 Ազգային սահմանադրություն հայոց. Կ. Պոլիս, 1863, էջ 8:

2 Նույն տեղում, էջ 24, 27:

3 Ա. Ալպոյաճյան. Անհետացող դեմքեր: Գրիգոր Զոհրապ. Կ. Պոլիս, 1919, էջ 61, 63—64:

4 Ա. Արփիարյան. Պատմություն ԺԹ գաբու Թուրքիո հայոց գրականության. Կահիրե, 1944, էջ 184:

5 «Մաղիկ», 1862, № 47, էջ 390:

6 «Հանդես», № 2

Մ. Մամուլյանը երբևէ չեն եղել նրա խմբագիրները. առաջինը եղել է հանդեսի սոսկ «համարատուն» Կ. Պոլսում (համարը ստորագրողը), իսկ երկրորդը՝ աշխատակիցը: Հիմնավորված չէ նաև այն բացատրությունը, թե «Ատամնաբույժն արևելյանում» տված իր դրվատական բնութագրով Պարոնյանը նկատի է ունեցել «Մաղիկի» առաջին շրջանը և թե իբր հանդեսը «հետագայում դարձել է ավելի չափավոր» (էջ 452): «Մաղիկի» բովանդակության մեջ երկու շրջանի բաժանում չի դիտվում: Այդ հանդեսը իր հրատարակության սկզբից մինչև վերջ ունեցել է դեմոկրատական դիրքորոշում:

Հառ. 4

էջ 45: Հ. Պարոնյանը գրում է. «Վարունգ, նոհուտ, նոհուտ թոփի... Այս բառերով է ահա, որ Մոմոս երկու շաբաթի ի վեր կովկասյան բարեբեր խընդրույն մեջ կճարակի»:

էջ 525, 13, ծան. 1: «Մոմոս—ըստ հունական դիցաբանության, Մոմոսը ծաղրի, պարսավանքի աստվածն էր»:

Իրականում Հ. Պարոնյանի խոսքը վերաբերում է ոչ թե հին հունական աստծուն, այլ Կ. Պոլսում հրատարակված «Մոմոս» հունական զավեշտաթերթին: Այսպես, 1876 թ. մայիսի մեծ վեճի Մահմուդ Նեդիմ փաշայի կողմից նախնական գրաքննություն մտցնելու պատճառով մի քանի թերթեր, այդ թվում և «Մոմոսը», որպես բողոքի ցույց, ինքնակամ դադարեցրել է իր հրատարակությունը⁶: Հ. Պարոնյանը ծաղրում է «Մոմոսին» այն պատճառով, որ այս թերթը ճգնում էր իր հերթին տարածել այն կեղծ լուրը, թե իբր Կովկասում ապստամբություն է բռնկվել ցարական տիրապետության դեմ:

էջ 528, 25, ծան. 1: «Հայրենիք»... լույս է տեսել Կ. Պոլսում, 1870—96 և 1901—1909 թվականներին»:

Վերջին տվյալը ճիշտ չէ. 1896 թ. խափանվելուց հետո «Հայրենիքը» լույս է տեսել տասներեք տարի անց՝ 1909 թ. հուլիսի 6-ից մինչև 1910 թ.⁷:

էջ 77: «Հայրենիք» ու «Մեճմուլայը հավատիս» լրագրաց խմբագիրները հոս են, թե գնացին,—գրում է Հ. Պարոնյանը և քիչ անց ավելացնում. «Ըսեք մեզ, ով Մարգարյան և Մելիքյան էֆենտիներ, հոս են, թե գացած են, եթե հոս են՝ ինչու չենք երթար, եթե գացած են՝ ինչու չենք գար»:

էջ 528, 26, ծան. 4: «Մարգարյանը անհայտ է, իսկ Մ. Մելիքյանը արտոնատերն էր «Հայրենիք» շաբաթաթերթին»:

Բայց արդեն Հ. Պարոնյանի բացահայտ ակնարկից իսկ երևում է, որ Մարգարյանը պետք է լինի «Մեճմուլայը հավատիս» խմբագիրը: Հ. Մարգարյանը «Մեճմուլայը հավատիս» խմբագրությունը ստանձնել է 1876 թ. հոկտեմբերին, իսկ դրանից առաջ եղել է «Մասիսի», «Ռուզնամեի» (հավելված) խմբագիրը⁸: Այնուհետև, Պարոնյանը նկատի ունի Տրապիզոնի Շանապուղի հարստահարությունների հետ կապված իրադարձությունները: Դրանց մասին մերկացնող նյութեր էին տպագրել «Արարատ», «Մեճմուլայը հավատիս» և «Հայրենիք» թերթերը (1876 թ. հոկտեմբերին): Թուրքական ոստիկանությունը, ի պատասխան դրա, ծեծելով մահվան դուռը հասցրեց «Արարատի» խմբագիր Մ. Այվաթյանին և ձերբակալեց մյուս երկու թերթերի խմբագիրներին⁹: Սակայն, երկնչելով դիվանագիտական միջամտությունից, Բ. Դուռը ստեղծեց մի հանձնաժողով, որը տեղում պետք է պարզեր նշված հրապարակումների ճշտությունը¹⁰: Այդ հանձնաժողովի հետ միասին Տրապիզոն էին մեկնելու նաև Մելիքյանը և Մարգարյանը (Այվաթյանը ծանր հիվանդ էր):

⁶ «Մասիս», 13 մայիսի 1876:

⁷ «Հայրենիք», 6 հուլիսի 1909: Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցանկ 1794—1980, կազմ. Մ. Բարլոյան. Երևան, 1986, էջ 36:

⁸ «Մասիս», 3 հոկտեմբերի 1876:

⁹ Ա. Այվաթյան. Պատմություն հայ Կեսարիո. Կահիրե, 1937, էջ 1039:

¹⁰ «Մասիս», 28 հոկտեմբերի 1876:

Նրանց մեկնելու մասին Կ. Պոլսի մամուլը հակասական լուրեր էր տալիս և այս է, որ ակնարկում է Հ. Պարոնյանը:

Էջ 529, 30, ծան. 3: «Նոր դար» — քաղաքական, ազգային և հասարակական օրագիր, լույս է տեսել 1874—1879 թվականներին»:

Սխալ է: «Նոր դարը» Օ. խոհասարկային «Օրագրի» վերանվանումն էր 1877 թ. հուլիս—օգոստոսից սկսած: Խափանումների պատճառով Օ. խոհասարկային անընդհատ փոխել է թերթի անունը: «Օրագիրը» 1876 թ. սկզբից վերանվանվել է «Նորագրի»¹¹, նույն թվականի օգոստոսի սկզբին՝ դարձյալ «Օրագրի», կրելով այս անունը մինչև 1877 թ. կեսը, որից հետո միայն կոչվել «Նոր դար»¹², «Նոր դարը» փակվել է ոչ թե 1879 թ., այլ շատ ավելի վաղ՝ 1878 թ. առաջին ամիսներին (1878 թ. ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին վախճանվել էր նրա խմբագիր Օ. խոհասարկայինը)¹³:

Էջ 532, 42, ծան. 2: «...Կամ օսմանյան երեսփոխանական ժողով, որը ունեցավ ընդամենը մի նստաշրջան և փակվեց»:

Զիշտ չէ: Օսմանյան երեսփոխանական ժողովը (խոսքը օսմանյան առաջին սահմանադրության կիրառման մասին է) ունեցել է երկու նստաշրջան. առաջինը բացվել է 1877 թ. մարտի 19-ին, երկրորդը՝ նույն թվականի դեկտեմբերի 13-ին¹⁴:

Էջ 147: Պարոնյանը գրում է «Թատրոնում»։ «Թող քյուրտերը շարունակեն իրենց ավարառություններն ու սպանությունները մինչև մարտի 1. անկե ետքը կտեսնվին հետերին»:

Էջ 533, 46, ծան. 3: «Մարտի մեկը սուլթանական Թուրքիայում ֆինանսական տարվա սկիզբն էր և նույնիսկ քաղաքացիների խանութների, տների վարձակալությունը ձևակերպվում էր ֆինանսական տարվա սկզբից, այսինքն՝ մարտի մեկից»:

Բայց ի՞նչ կապ կարող էր ունենալ ֆինանսական տարվա սկիզբը հայ գավառներում քրդական հարստահարությունների հետ: Կարծում ենք՝ ոչ մի: Խոսքը պարզապես վերաբերում է օսմանյան խորհրդարանի առաջին նստաշրջանի բացմանը: Նախատեսված էր խորհրդարանը բաց անել 1877 թ. մարտի 1-ին, բայց այդ հնարավոր եղավ միայն մարտի 19-ին, որովհետև գավառների երեսփոխաններից ոչ բոլորն էին հասցրել Կ. Պոլիս գալ նշանակված օրը¹⁵:

Հ. Պարոնյանը, որ ի սկզբանե չէր հավատում օսմանյան սահմանադրության գործունակությանը և դրա նշանակությանը՝ երկրում հարստահարությունները վերացնելու գործում, այս անգամ ևս ծաղրում է դրա գուտ ձևական արժեքը: Արդյոք քրդական հարստահարող վերնախավը կքաղաքակրթվի՝ հաշվի առնելով, որ մարտի 1-ին խորհրդարանը կբացվի, այս է նրա հեղինակյալ գիտողության իմաստը մարտի 1-ի առթիվ:

Էջ 537, ծան. 1: «Նեոլոգոս թրակիս» — հունական թերթ:

Հ. Պարոնյանի տեքստում (էջ 192) պարզապես ստորակետ չի դրված՝ «Նեոլոգոսը» «Թրակիսից» (պետք է լինի՝ «Թրակի») բաժանելու համար և ծանոթագրողը այդպիսով իրար է միացրել երկու տարբեր թերթեր: Այսպես, 1876 թ. հունվարին մեկ ամսով խափանվել է «Թրակին», 1877 թ. հուլիսին՝ երկուսը միասին¹⁶, նույն կերպ, տպագրական տեսչությունը 1880 թ. անգլիական թերթերից «վնասակար հոդվածների» արտատպության համար խիստ

¹¹ Նույն տեղում, 6 հունվարի:

¹² Նույն տեղում, 27 օգոստոսի 1877:

¹³ Նույն տեղում, 4 մայիսի 1878: Չի բացառվում նաև, որ «Նոր դարը» այլևս հրատարակված չլինի 1877 թ. դեկտեմբերի խափանումից հետո:

¹⁴ R. Devereux. The First Ottoman Constitutional Period' Baltimore. 1963, pp. 108, 215; Ю. А. Петросян. Младотурецкое движение (вторая половина XIX — начало XX в). М., 1971, с. 97.

¹⁵ R. Devereux. Op. cit., p. 109.

¹⁶ Մասիս, 27 հունվարի 1876, 14 հուլիսի 1877:

նախազգուշացում է արել «Թրակիին», իսկ «Նեոլոդոսին» նույնը արվել է մի որոշ ժամանակ անց և այլն¹⁷:

էջ 521, ծան. 2: «Ասիա»... լրագիր, լույս է տեսել Կ. Պոլսում, 1872—1875 թվականներին, Հովհ. Բեյիզյանի խմբագրությամբ:

Ծանոթագրությունը թերի է. «Ասիան» լույս է տեսել 1872—1874 թթ. (դադարել է հոկտեմբերի 21-ին)¹⁸: Նախապես թերթը խմբագրել է Հ. Թեյիզյանը, ապա Հ. Խանճյանը, իսկ 1873 թ. դեկտեմբերի 1-ից՝ Մ. Փորթուզալյանը: Հայ մամուլի բոլոր մատենագիտություններում ճիշտ չի նշված «Ասիա-ի» դադարի տարին (1875՝ 1874-ի փոխարեն):

էջ 539, 64, ծան. 2: «Խայալ»—թուրքերեն երգիծաթերթ, լույս է տեսել Կ. Պոլսում, 1857 թ., Հ. Թընկյանի խմբագրությամբ:

Իբրև ոչ ստույգ աղբյուր ծառայել է Գ. Լեոնյանի մատենագիտությունը, թեև վերջինս նշում է 1875 թ.¹⁹: Իրականում «Խայալը» լույս է տեսել 1873—1876 թթ., հուլիս Թ. Կասաբի խմբագրությամբ²⁰: Գ. Լեոնյանը, թերևս, ինչ-որ տեղ հարցն առնել է նույն Կասաբի «Դիյոթեն» երգիծաթերթի հետ, որը 1874 թ. երկու-երեք համար լույս է տեսել նաև հայատառ թուրքերենով և դադարել՝ ընդունելություն չգտնելու պատճառով²¹:

Հատ. 6

էջ 52: 1871 թ. «Մեղվի» հուլիսի 1-ի համարում Հ. Պարոնյանը գրում է (երգիծական երկխոսություն է).

— Կուզես «Փունջի» դեմ խոսիլ և սրիկա կոչվիլ.

— ՍՈՒՐ եղիր:

էջ 405, «Մանր ճշմարտություններ», ծան. 6: «Սուրը Մինաս Չերազն է, որը «Գրիչ և սուր» ընդհանուր վերնագրով հոդվածներ էր հրատարակում նախ «Ասիայում» և ապա «Թատրոնում»:

Բայց Մ. Չերազի «Գրիչ և սուրը» տպագրվել է «Ասիայի» 1874 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին (1876 թ.)՝ նաև «Արևելյան մամուլում»: Հետևաբար 1871 թ. Հ. Պարոնյանը չէր կարող այդ հոդվածաշարը նկատի ունենալ: Պարոնյանը ականարկում է Բարթոլ Սուրին (Բ. Թաթարյան), որը «Սուր» ստորագրությամբ բանավիճային հոդվածներ էր տպագրում «Փունջի» դեմ՝ իր «Փողարևելյան» պարբերականում: Երգիծաբանը ծաղրում է «Փունջի» անպատշաճ հարձակումները Բարթոլ Սուրի դեմ:

էջ 405, «Թե որներ», ծան. 3: «Ակնարկն ուղղված է «Մեծմուսիի հավատիս»... թերթին, որը լույս է տեսել 1852—1853 թվականներին՝ Հովսեփ Վարդան փաշայի խմբագրությամբ:

Ճիշտ չէ: Այս թերթը լույս է տեսել 1852—1877 թթ. և բացի Հ. Վարդանյանից, այն խմբագրել է նաև Հ. Թուլայանը²²: Այս սխալը կրկնված է հատ. 7, էջ 447, ծան. 43-ում:

Հատ. 7

էջ 81: Երգիծելով Խ. Միսաքյանին, Հ. Պարոնյանը գրում է.

— Միսաքյան էֆենտի ինչպես ջարդ տվավ յուր համբավուն:

— Յուր կենդանիին ծնոտովը:

¹⁷ Նույն տեղում, 18, 16 փետրվարի 1880:

¹⁸ «Ասիա», 1874, հոկտեմբերի 22-ի հավելվածը:

¹⁹ Գ. Զ. Լեոնյան. Հայոց պարբերական մամուլը. Երևան, 1984, էջ 21:

²⁰ А. Д. Желяков. Печать в общественно-полигической и культурной жизни

Турции (1729—1903 гг.). М., 1972, с. 157, 166; А. Пармаксızоглу. Türk gazetecilik ve basın tarihi. İstanbul, 1959, s. 22.

²¹ «Թատրոն», 5 հունիսի 1874:

²² Հայատառ թուրքերեն հայ մամուլ, կազմ. Հ. Ա. Ստեփանյան. Երևան, 1987, էջ 11:

էջ 437—438, ծան. 30: «Պարոնյանը «հայթիվածքների» մեջ հաճախ է ծաղրում *հ. Միսաքյանին*, նամանավանդ նրա էլ ունենալու ցանկությունը... և իր ակնարկներն ու համեմատությունները կատարում է կենդանի բառի միջոցով: Սույն տողերի իմաստն այն է, թե ինչպես Միսաքյանը էջի ծնոտով, այսինքն՝ էլ ունենալու ցանկության համար կոտրեց իր համբավը»:

Ոչնչացված է Պարոնյանի սքանչելի երգիծանքը: Բանն այն է, որ Պարոնյանը ամենևին էլ նկատի չունի «Միսաքյանի էլ ունենալու ցանկությունը» (Միսաքյանը ինքը այդպիսի ցանկություն, բնականաբար, չէր կարող ունենալ, Կ. Պոլսում մտավորականը ավանակով չէր շրջում): Այդպիսի ցանկությունը Պարոնյանն է վերադրել նրան, իբրև երգիծական հնարանք («Ազգային ջողերում»): Խնդիրը, մինչդեռ, կայանում է հետևյալում. *հ. Միսաքյանը* միջամուխ էր եղել 1873 թ. «կենդանի» բառի առթիվ «Մասիսի» և «Փունջի» անիմաստ բանավեճին և հանդես եկել ընդդեմ ՝ Մ: ասիսի»: Պարոնյանը քանիցս ծաղրել է Միսաքյանի այդ ելույթը և այստեղ է, որ զուգահեռ է անցկացնում նրա և ավետարանական Սամսոնի միջև. եթե Սամսոնը փղշտացիներին ոչնչացրել է կենդանու՝ ավանակի ծնոտով, ապա Միսաքյանը նույն ծնոտով ոչնչացրել է սեփական պատիվը՝ «կենդանի» բառի շուրջ չնչին բանավեճի հետևանքով: Պարոնյանի բառախաղը առավել թունոտ է դառնում նաև իր երկիմաստությամբ. ծնոտը կարելի է վերագրել և՛ կենդանուն, և՛ կենդանու տիրոջը:

էջ 181: 2. Պարոնյանը գրում է. «Բերթե Էֆենտին պանքայի դատին մեջ միշտ պաեֆան բերաննիդ մ'առնեք ըսած ըլլալն հետևյալ դեպքին առիթ տված է» (ընդգծումը բնագրինն է—Ա. հ.):

էջ 447, ծան. 33: «Հավանաբար Բերթե Էֆենտին դատավարության մասնակից պաշտոնական դեմքերից էր»:

Ճիշտ չէ. Բերթե Էֆենտին ոչ դատավարության մասնակից էր, և ոչ էլ դրա հետ կապված պաշտոնական դեմք: Նա տալազրական տեսչության աշխատակիցներից էր, որը 1874 թ. սեպտեմբերին և 1878—1879 թթ. զբաղեցրել է այդ տեսչության տնօրենի պաշտոնը²³: Ինքը՝ Պարոնյանը ևս մեր մեջբերած հատվածում շատ աներկմիտ հայտնում է, որ Բերթե Էֆենտին արգելել է մամուլին՝ տեղեկություններ տալ բանկի դատի մասին:

էջ 199: 2. Պարոնյանը գրում է.

— Կամաց կամաց պիտի վարժվինք, քանի մը օրե ի վեր ծնոտես կախվելու փորձ կընեմ կոր, բայց չեմ կրնար կոր:

«—Կարծեմ այդ փորձը Հ...ի երեսփոխան Մ... Էֆենտին ամենեն աղեկ կրնա ընել»։ Քիչ անց երգիծաբանը նկատում է. «Շատ խոսելեն հասկցա, որ զորավոր ծնոտ մը ունի և շուտ չհոգնիր»:

էջ 448, ծան. 58: «Հեղինակի ակնարկը անհայտ է. պարզել անձնավորությունը՝ նույնիսկ ազգային ժողովի արձանագրությունների միջոցով, մեր որոնումները ապարդյուն անցան»:

Ազգային ժողովի արձանագրություններում այդ երեսփոխանին որոնելը ի սկզբանե ավելորդ էր, որովհետև խոսքը վերաբերում է ոչ թե արևմտահայոց Ազգային ժողովին, այլ օսմանյան պառլամենտի երեսփոխան, Հալեպից ընտրված Մանուկ հարաճյանին (1-ին և 2-րդ նստաշրջաններ)²⁴: Մ. հարաճյանը հայտնի է, մասնավորապես, մամուլի ազատության վերաբերյալ իր ելույթներով²⁵, որոնք ոչ մի նշանակություն չեն ունեցել Թուրքիայում մամուլի ճնշված վիճակը թեթևացնելու համար: Նման ելույթները Պարոնյանը համարել է ծնոտի անօգուտ շարժում, շաղակրատանք:

էջ 272: 2. Պարոնյանը գրում է. «Խիկար» վստահ է, թե նորին ամենապատվություն պիտի հաճի հրաժարականն ետ առնուլ»:

²³ S. R. İskit. Türkiye'de matbuat idare'eri ve politikaları. Ankara, 1943, s. 79. «Մասիս», 4 սեպտեմբերի 1874.

²⁴ R. Devereux. Op. cit., p. 269.

²⁵ S. R. İskit. Matbuat rejimleri. Ankara, 1948, s. 131—135.

էջ 454, ծան. 12: «Խոսքը ներսես Վարժապետյանի մասին է: Վարժապետյանը իր գործունեության ընթացքում հաճախ է հրաժարականներ ներկայացրել Ազգային ժողովին»:

Բայց Պարոնյանը նշված տողերը գրել է 1887 թ. («Խիկարում»), մինչդեռ Ն. Վարժապետյանը վախճանվել է 1884 թ. հոկտեմբերին²⁶: Ուրեմն, երգիծաբանի խոսքն ուղղված է 1885 թ. ապրիլին պատրիարք ընտրված Հ. Վեհապետյանին²⁷: Միայն Ն. Վարժապետյանը չէ, որ հրաժարականներ է տվել. Հ. Վեհապետյանի հրաժարականը, որի մասին գրում է Պարոնյանը, տրվել է 1887 թ. փետրվարի 20-ին²⁸:

էջ 448, ծան. 50: «Բեժի ծխախոտ» — Թուրքիայում ծխախոտի մենաշնորհ ունեցող անգլո-ֆրանսիական ընկերության ծխախոտները»:

Ընդհատ չէ: Բեժի (հիմն. 1883 թ. և գործել է մինչև 1925 թ.) Վիեննայի և Բեռլինի ու «Բանկ Օտոմանի» միացյալ ընկերությունն էր²⁹:

էջ 454, ծան. 4: «Երկրագունդ» — հանդես ամսյա, լույս է տեսել Պոլսում... նախ Հ. Պարոնյանի, և ապա Ե. Տնտեսյանի տնօրինությամբ»:

Ե. Տնտեսյանի փոխարեն պետք է լինի Ե. Տեմիրճիպաշյան: Ծանոթագրության սխալը սկիզբ է առնում Գ. Լևոնյանի մատենագիտությունից, թեև պետք է ասել, որ Գ. Լևոնյանը չի բացառել, որ Ե. Տնտեսյանի փոխարեն խմբագիր եղած լինի Ե. Տեմիրճիպաշյանը³⁰:

Հատ. 8

էջ 144: Ծաղրելով «Մամուլի» խմբագիր Գ. Այվաղյանին, Հ. Պարոնյանը նրան դնում է զավեշտական գործողության մեջ. «Ժամանակավ «Մանգումբի» հետ վիճաբանած ատեն «Մանգումբն» ձգեց և բասթրմայի վրա հարձակեցավ» (Այվաղյանը — Ա. Խ.): Այս հատվածը ծանոթագրված է այսպես. «Մանգումբի» խմբագիր Կ. Փանոսյանը կեսարացի էր, բասթրմայի հայրենիքից: Պարոնյանը կողմնակի այս ակնարկով նախ շեշտել է Այվաղյանի հարձակումը կեսարացիների վրա և երկրորդ՝ Փանոսյանի որկրամոլությունը» (էջ 488, «Լրագրական դիցաբանության Ապիսը», ծան. 2):

Բայց եթե Այվաղյանը հարձակվել է բասթրմայի վրա (եթե անգամ Կեսարիան եղած լինեիր բասթրմայի «հայրենիքը»), ապա դեռևս չի նշանակում, թե նա հարձակվել է ընդհանրապես կեսարացիների վրա: Պարոնյանի մտքով անգամ չի անցել ո՛չ այդ և ո՛չ էլ «շեշտել Փանոսյանի որկրամոլությունը»:

Նույն հոդվածում Պարոնյանը շարունակում է ներկայացնել Այվաղյանի զավեշտական գործողությունները. «Մասիսի» հետ վեճի բռնվեցավ և անոր բալթոյին վրա հարձակեցավ: «Օրագրի» դեմ խոսիլ ուղեց և օղիի տակառներուն վրա քալեց» (էջ 144): Ըստ ծանոթագրության, այստեղ «ծաղրված է «Մասիսի» խմբագիր Կ. Ությունյանը» (էջ 488, ծան. 3):

Բայց միթե պարզ չէ, որ Պարոնյանը ծաղրում է ոչ թե վերարկուի տիրուքը, այսինքն՝ Կ. Փանոսյանին, այլ հարձակվողին՝ Գ. Այվաղյանին: Հարբեցողության ակնարկը ևս վերաբերում է ոչ թե Օ. Խոճասարյանին, ինչպես ասված է ծանոթագրության մեջ (էջ 488, ծան. 4), այլ դարձյալ Այվաղյանին (որի այդ հակումը քանիցս ծանկվել է «Մեղվում»): Առհասարակ Պարոնյանի այս ֆելիետոնը ամբողջովին ուղղված է Գ. Այվաղյանի դեմ:

էջ 179: Հ. Պարոնյանը գրում է 1872 թ. հունվարի 19-ի «Մեղվի» համարում. «Մահամադրության վերաբնությունը աստված շատ տարիներ հասցնե»:

²⁶ «Արևելյան մամուլ», 1884, № 10, էջ 521—523:

²⁷ Նույն տեղում, 1885, № 4, էջ 169—178:

²⁸ Նույն տեղում, 1887, № 4, էջ 160—169:

²⁹ А. Д. Новичев. Очерки экономики Турции до мировой войны. М.—Л., 1937, с. 71.

³⁰ Գ. Զ. Լևոնյան. նշվ. աշխ., էջ 24:

էջ 477, «Ազգային», ծան. 1-ում ոչ մի բացատրություն չի տրվում հրիմ-
յանի պատրիարքության ժամանակ շատ սրված՝ սահմանադրության վերաբեր-
նության հարցի մասին: Մինչդեռ հենց դրան է վերաբերում Պարոնյանի դի-
տողությունը և ոչ թե ընդհանրապես սահմանադրության վերաբերնությանը:
Պարոնյանը նկատի ունի այս հարցի շուրջ Մ. Խրիմյանի և նրան հակադրվող
քաղաքական ժողովի միջև մղվող շարունակական պայքարը: Դրա հետևան-
քով էր, ի դեպ, որ Խրիմյանը հեռացավ պատրիարքական աթոռից:

էջ 205—200: 2. Պարոնյանը դրում է, որ «Մանգումեի էֆենդի» «Լեվընդ
հերալդից» թարգմանաբար տպագրել է «Հոգվածիկ մը», որտեղ հանդիմա-
նության են արժանանում հացի մեջ գարի խառնող հացագործները: Այս առ-
թիվ երգիծաբանը քննադատում է ոմն Քարաբանոս էֆենտու:

էջ 502, ծան. 3: «Ըստ երևույթին, Քարաբանոս էֆենտին Պոլսի քաղա-
քապետության պաշտոնյա է և կամ պարզապես այդ անվամբ է հեղինակը
ծաղրում պաշտոնյաներից որևէ մեկին»:

Բայց դժվար չէ նկատել, որ Պարոնյանը Քարաբանոս անվան տակ
նկատի ունի ԿԱՐԱԿԵՍ ՓԱՆՈՍյանին, որը «Մանգումեի էֆենդի» թարգմա-
նաբար տպագրել էր նշված հոգվածը: Պարոնյանը իր հակառակորդների ան-
վանը «ոս» վերջավորությունը կցում է մանավանդ այն ժամանակ, երբ ծաղ-
րում է նրանց կողմից ազգային կարևոր խնդիրները շրջանցելու իրողությու-
նը: Հիշենք Գ. Այվազյանին ուղղված նրա տողերը՝ «օրինակի համար, թե որ
«Մամուլը» հույն ըլլալ ուղե՝ Գեորգիոս Այվազբոլոս պիտի ըսվի» (հ. 8, էջ
211):

էջ 459: «Ըրագրության ասպարեզում (արևմտահայ—Ա. Խ.) գոյություն
են ունեցել երկու երգիծական թերթերի խմբագիր-հրատարակիչներ, մեկը
Գեորգ Այվազյանի «Մամուլի», մյուսը՝ Հակոբ Հաճյանի «Միմոսի»: Թե մեկը
և թե մյուսը Պարոնյանի գաղափարական հակառակորդներն էին, որոնց դեմ
նա վարել է հետևողական պայքար... Բացի այս, Այվազյանն ու Հաճյանը
իրեն ստեղծագործողներ միջակություններ էին...»:

Չի նշված «Շառիվառի» երգիծական հանդեսը, որի խմբագիրը Հ. Հաճ-
յանն էր: Բացի այդ, չի կարելի քամահրանքով խոսել Գ. Այվազյանի, որպես
ստեղծագործողի մասին, մինչև որ վերջնականապես չպարզվի, թե արդյոք
նա՞ է գրել «Մամուլի» երգիծական նյութերը, թե՞ ոչ: Համենայն դեպս, «Մա-
մուլը» եղել է ժամանակի ազդեցիկ պարբերականներից մեկը, այնքան ազ-
դեցիկ, որ Պարոնյանը մշտական և սկզբունքային պայքար է մղել նրա դեմ:
Մեր օրերում արհամարհանքով բնութագրել «Մամուլը»՝ կնշանակել կողմնա-
կալ կերպով կրկնել Պարոնյանին: Այնինչ, «Մամուլում» կան բազմաթիվ
ուշագրավ և երգիծական տաղանդի փայլից ոչ զուրկ լրագրական ու գեղար-
վեստական ժանրերի գործեր՝ պատմվածք, հումոր, երկխոսություն և այլն,
որոնք ունեցել են իրենց մշտական ընթերցողը: Արևմտահայ երգիծական
պատմվածքի զարգացման մեջ, զիջելով Հ. Պարոնյանի պարբերականներին,
«Մամուլը», սակայն, կարևոր տեղ ունի. ժողովրդական երգիծանքի, խոսքի,
կենցաղային երևույթների զավեշտական վերարտադրության ձևով «Մամուլը»
մի հայտնի չափով շարունակել է Հ. Սըվաճյանի երգիծանքի ավանդույթները:

Կարծում ենք, պատշաճ չէ, երբ ակադեմիական հրատարակության մեջ
ծանոթագրողը բազմաթիվ անգամներ շեշտում է, որ Պարոնյանը Այվազյա-
նին համեմատել կամ նմանեցրել է ավանակի հետ (տես միայն այս հատորի
էջ 483, 484, 485, 487, 489, 506 և այլն): Առհասարակ պետք է ասել, որ այս
կենդանին ազատ-համարձակ երթևեկում է խնդրո առարկա ծանոթագրու-
թյունների բազմաթիվ էջերում:

էջ 464, «Պարոն խմբագիր», ծան. 3: «Մեղու», երգիծական հանդես, լույս
է տեսել 1856—1872 թվականներին՝ Հ. Սըվաճյանի խմբագրությամբ:

Թերի է: Հ. Սըվաճյանը «Մեղուն» խմբագրել է 1856—1863 թթ.: 1863—
1865 թթ. նրա խմբագիրներն են եղել Ա. Հայկունին, Հ. Հովվյանը և Ա. Մու-
րատյանը: Բացի այդ, «Մեղուն» չի հրատարակվել 1866—1869 թթ., իսկ
1870—1872 թթ. այն դարձյալ խմբագրել է Հ. Սըվաճյանը (1872 թ. մինչև
վերջ՝ Հ. Պարոնյանը):

էջ 482, «Օրագրո» չորեքշաբթի ավուր մեկ հոգւովածը», ծան. 1: «Պատրիարքական փոխանորդը Հովհաննես քահանա Մկրյանն էր, իսկ «Օտյանց տունը» հայտնի հասարակական գործիչ, օսմանյան երեսփոխանական ժողովի անդամ Գ. Օտյանի տունը»:

Ամենևին: Գ. Օտյանը երբեք օսմանյան երեսփոխանական ժողովի անդամ չի եղել: Օսմանյան առաջին սահմանադրության (1876) խմբագրման մեջ նրա ունեցած մասնակցությունը բնավ այդպիսի դատողության հիմք չի տալիս:

էջ 504, «Ալֆազարի խնդիր», ծան. 1: «Ալֆազարը ազգային կալվածք էր կառավարությունից (ցանկանում էր ասել՝ կառավարության կողմից—Ա. Խ.) բռնագրավված. «վարձակալը» կառավարությունն է, որի դեմ ազգը տարիներ շարունակ դատական գործ հարուցեց և ի վերջո հետ ստացավ իր սեփականությունը»:

Ծանոթագրողը շփոթել է Ալֆազարի հետ կապված երկու դատական գործեր՝ 1869—1873 թթ. և 1875-ից սկսվածը: Պարոնյանի հոգւովածը նվիրված է առաջինին և գրված է 1873 թ.: Խնդիրը կայանում էր հետևյալում. Ալֆազարը Բերայի Ս. Նրրորդության եկեղեցուն կից՝ «Արևելյան թատրոնի», ապա «Ալֆազար լիրիկի» և հետո՝ «Ալֆազար դը Բիզանսի» շենքն էր, հայերի ազգային կալվածքը: 1869 թ. շենքը զբաղեցրեց հույն Ա. Կաստելանոն՝ առանց վարձ վճարելու, ապա ապօրինի հանձնեց մի այլ հույնի՝ Վ. Վալյանոյին: Կալվածքն ազատելու համար պայքարել են Գ. Օտյանը, Հ. Գաղազյանը, Ա. Նեվրուլյանը և ուրիշներ, իսկ 1873 թ. կազմվել է հոգաբարձություն՝ շենքի հետ կապված դատական գործով զբաղվելու համար: Դատական երկար քաջբռնկներից հետո, 1873 թ. մայիսի 9-ին ոստիկանությունը վտարում է Վալյանոյին³¹: Ի դեպ, Վալյանոն մինչև վտարվելը հանկարծակի մեջտեղ էր բերել իր ռուսահայտակա լինելու պատճառաբանությունը՝ փորձելով նորից ձգձգել շենքի հանձնումը: Գործին միջամտել էր ռուսական ղեկավարության դրագոմանը: Այս առթիվ Պարոնյանը գրում է. «Օրագիր այս լուրը տալով կըսե, թե ասիկա մեծ խնդրո կերպարանը պիտի առնե, եթե վերջին դուռը բացվելով թարգմանը դուրս չելեր» (հատ. 8, էջ 242):

Ծանոթագրողը այս անգամ արդեն ասում է այն, ինչ պետք է անել ընդհանրապես Ալֆազարի հարցի կապակցությամբ. «Ակնարկը հայտնի չէ»,— գրում է նա (հատ. 8, էջ 506, ծան. 2):

Ալֆազարի շենքի բռնագրավումը կառավարության կողմից, որի մասին գրում է ծանոթագրողը, տեղի է ունեցել արդեն 1875 թ., Փարիզի Հայկազյան վարժարանի պարտքի կապակցությամբ, բայց դա որևէ կապ չունի Պարոնյանի մեղ հետաքրքրող հոգւովածի հետ:

Հատ. 9

էջ 46: Պարոնյանը գրում է. «Հակահասունյանց պատրիարքն տակավին ի շնորհավորության չեկավ մեր պատրիարքին»:

էջ 337, ծան. 15: «Պատրիարքը հակահասունյան կաթոլիկների պարագլուխ էնֆիաճյան Գրիգորիս վարդապետն էր»:

Գ. էնֆիաճյանը երբեք պատրիարք չի եղել: Այս ժամանակ, 1874 թ. հակահասունյանների պատրիարքը Հ. Քյուրեբլյանն էր:

էջ 336, ծան. 5: «Եղեայան Հովհ. սրբազանը որպես հոգևոր առաջնորդ ուղարկված էր Իզմիր...»:

Բայց Հ. Եղեայանը Իզմիր է ուղարկվել պատրիարքարանի կողմից՝ պատրիարքական տեղապահի պաշտոնով³²: Որպես առաջնորդ, նա չէր կարող ուղարկվել այն պարզ պատճառով, որ ըստ սահմանադրության, առաջնորդներին ոչ թե ուղարկում էին, այլ նրանց ընտրում էին գավառական ժողովները:

³¹ «Մամուլ», 1873, № 275, էջ 113—114, № 282, էջ 169:

³² «Արշալույս արարության», 1873, № 970, «Արևելյան մամուլ», 1873, № 12, էջ 505—524:

էջ 344, «Թատրոնի» գրառեցյալը լուծված հանելուկ մը», ծան. 1: «Արշալույս արարատյան»... Լույս է տեսել չսյուտնիայում, 1840—1887 թթ.»: Սյուտնեղ, ինչպես հայ մամուլի բոլոր մատենագիտություններում, ճիշտ չի նշված թերթի դադարի տարին: Իրականում «Արշալույս արարատյանը» դադարել է 1884 թ. դեկտեմբերին կամ 1885 թ. հունվարի սկզբին³³:

Հատ. 10

էջ 81: 2. Պարոնյանը գրում է. «Լուսին» համազգի լրագիրն ըստ սովորության երեսուն օրեն պիտի մեռնի և հետևյալ օրը նորեն պիտի երևնա...»: էջ 701, ծան. 3: «Այս թվականներին «Լուսին» անունով լրագիր մեզ անհայտ է»:

Հիրավի, «Լուսինը» դուրս է մնացել հայ մամուլի մատենագիտություններից: Այն լույս է տեսել 1876 թ. հունվարի վերջին շաբաթից: «Այս շաբաթ «Լուսին» անունով նոր թերթ մը հրատարակված տեսանք»,—գրում է «Մասիսը»³⁴: «Լուսինի» արտոնատերն էր Ա. Ծեվահիրճյանը³⁵: 1876 թ. փետրվարի առաջին տասնօրյակին «Լուսինը» խափանվել է. «Արդեն ծագած օրեն կասկած կար բոլորովին խավարման հանդիպելուն»,—գրում էր «Մասիսը»³⁶: 2. Պարոնյանը ևս այստեղ ակնարկում է թերթի խափանվելը. նրա դատողություններից կարելի է կռահել, որ «Լուսինը» պայքարելու էր դավանական պառակտումների դեմ:

էջ 219: 2. Պարոնյանը երգիծական ձևի մեջ ներկայացնում է իրողություններ, որոնք անհնարին են, այդ թվում և «Սահմանադրության (օսմանյան սահմանադրություն—Ա. Խ.) 113-րդ հոդվածը գոց չգիտցող մը» (այսինքն՝ բոլորն էլ գիտեն սահմանադրության 113-րդ հոդվածը):

էջ 715, «Մեր անթրֆաներում հավաքածուն», ծան. 3: «Ակնարկը վերաբերում է օսմանյան սահմանադրության 113-րդ կետին, համաձայն որի, երկրից կարող էին արտաքսվել անբարեհույս տարրերը»:

Բացատրությունը չի վերաբերում 113-րդ հոդվածի բովանդակությանը: Իրականում այդ հոդվածը վերաբերում էր սովթանին տրված բացառիկ իրավունքին, որին հենվելով նա կարող էր երկրում հայտարարել արտակարգ դրություն, կասեցնել սահմանադրության կիրառությունը և այլն³⁷: Այդ իրավունքի ուժով սովթանը հաշվեհարդար տեսավ իր քաղաքական հակառակորդների հետ. 1877 թ. փետրվարի 5-ին նա պաշտոնանկ արեց մեծ վեզիր Միդհատ փաշային³⁸: Պարոնյանը ակնարկում է հենց վերջինիս պաշտոնանկությունը, որի իրավական հիմքը (113-րդ հոդվածը) հայտնի էր ամենքին:

էջ 305: 2. Պարոնյանը գրում է. «Ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը կհրաժարի յուր ժանուցյալ ժերությունն սլատճառավ»:

էջ 727, ծան. 18: «Հիշատակված պատրիարքը Խ. Աշըգյանն էր»:

Ո՛չ, խոսքը վերաբերում է 2. Վհայպետյան պատրիարքին և 1888 թ. փետրվարին նրա տված հրաժարականին³⁹: Պարոնյանը վերոհիշյալ տողերը գրել է 1888 թ. մայիսի 21-ին, իսկ Խ. Աշըգյանը պատրիարք է ընտրվել դրանից շուրս ամիս անց, սեպտեմբերին⁴⁰: Հետևաբար, Խ. Աշըգյանը հրաժարական տալ չէր կարող, քանի որ դեռևս պատրիարք չէր ընտրվել:

³³ Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը: 1858—1896 (ծանոթագրություններ), կազմ. Ա. Ա. Խառատյան. Երևան, 1984, էջ 55—57:

³⁴ «Մասիս», 29 հունվարի 1876:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, 10 փետրվարի:

³⁷ «Փորձ», 1876, № 1-ի հավելվածը, էջ 75:

³⁸ S. Mardin, The Genesis of Young Ottoman Thought. Princeton—New Jersey 1962, pp. 74—76. R. Devereux. Op. cit., p. 102.

³⁹ «Արևելյան մամուլ», 1888, № 2, էջ 81—85:

⁴⁰ Նույն տեղում, 1888, № 10, էջ 465—468:

էջ 276: Հ. Պարոնյանը գրում է.
Քեզին պույնուզեն վնասեցար,
Դարման կտանիս, դեռ չաղատեցար.
Նավակն կորուսած նավու պես՝
Ամեն հովու խաղալիք դարձար:
— Մասիս,

էջ 724, «Հունե, աղջիկս, հունե», ծան. 1: «Քեզի պույնուզն հատապտուղ է, բառացի՝ այծի եղջյուր. բառախաղով ակնարկում է (Հ. Պարոնյանը—Ա. Խ.) Բյուզանդ Քեչյանին, որը «Մասիսում» քննադատել, եղջյուրահարել է խմբագիր Ություճյանին»:

Բացատրությունը ճիշտ չէ: Բ. Քեչյանը, որ «Մասիսի» օգնական խմբագիրն էր, չէր կարող և երբեք էլ չի քննադատել իր թերթի խմբագրին, հակառակ դեպքում անհնար կլինեիր նրա աշխատակցությունը «Մասիսին» և համազործակցությունը Ություճյանի հետ: Պարոնյանը ակնարկում է իրական դեպք, երբ Բ. Քեչյանը իր համարձակ գործակերպով վնաս էր պատճառել «Մասիսին»: 1883 թ. հոկտեմբերին, շափազանց զգույշ, Կ. Ություճյանից զաղտնի, նա «Մասիսի» էջերում տպագրել է «Լուրեր Վանեն» տեղեկությունը՝ վանում թուրքերի կատարած հարստահարությունների մասին: Այդ լուրի պատճառով թերթը երկու ամիս փակվեց գրաքննական մարմինների կողմից⁴¹ (1880-ական թթ. սկզբից համիդյան գրաքննությունը արգելել էր արևմտահայերի հարստահարությունների թեման): Դրանից հետո «Մասիսի» գործերը ձախողվեցին: «Այս փակումը կարծես մահվան նախազգեկույց ազդարարությունը եղավ»,—գրում է Ա. Արփիարյանը⁴²: Ություճյանը հարկադրված էր «Մասիսը» վաճառել «Արևելքի» վարչությանը:

էջ 707, «Բաբելոնի մեջ եղած նամփոռդության մեջ Խիկարի նամփոռդությունը». ծան. 1: «Մտեփան փաշա Ասլանյանը 1876 թ. հրատարակել էր բժիշկ Բարունակ Ություճյանի ճամփորդական գրառումն՝ «Ճանապարհ: Բդուլին ի Բաբելոն ընդ աշխարհ Հայս յամին 1847» վերնագրով...»:

Ծանոթագրումը ճիշտ չէ. ճամփորդական գրառման հեղինակը ոչ թե Բարունակ Ություճյանն է, այլ Բարունակ Ֆերուհյանը (Քրթիկյան):

էջ 719, «Զվարճալիք», ծան. 2: «Մ. Զերազը աշխարհաբար լեզվի մեջ կատարեց որոշ փոփոխություններ, քմահաճ ներմուծումներ, որոնց հետևորդներն էր «Արշալույս արարատյանը»:

Ամենևին: Մ. Զերազի նորամուծությունները, անկախ իրենց արհեստականությունից, հետամտում էին գրական աշխարհաբարի զարգացումը և հակադրվում էին գրաբարյաններին: Մինչդեռ «Արշալույս արարատյանը» 70-ական թթ. անվերապահորեն պաշտպանում էր գրաբարի վերածնության գաղափարը և գրաբարյանների ամբիոնն էր նշված ժամանակաշրջանում: Ինքը՝ Հ. Պարոնյանը շատ պարզ ու հասկանալի գրում է նույն այս «Զվարճալիքում». «Արշալույս արարատյան», որ կարմիր գրաբարյան մ'է, չկրնալով հանդուրժել ծայրահեղ աշխարհաբարյանց ընթացքին, աշխարհաբարը բոլորովին արտաքսեմ և գրաբար գրել սկսեմ է» (էջ 236): Դրանից հետո ծանոթագրողը արդեն նույնիսկ առանց «Արշալույս արարատյանի» լեզվական պահպանողականությանը անձամբ ծանոթանալու, կարող էր հասկանալ Հ. Պարոնյանի հետևյալ միտքը (որին էլ սխալ բացատրություն է տվել). «Պարոն Զերազ, որ պատճառ եղավ «Արշալույսի» այս մոլություն, պարտավոր էր կարծեք, հանդարտեցնել «Արշալույսը» (էջ 236):

Սա նշանակում է, որ Զերազի կողմից աշխարհաբարի պաշտպանությունն է եղել պատճառը, որ «Արշալույս արարատյանը» դառնա գրաբարի շատագույր:

էջ 730, «Օրական շաբաթական», ծան. 3: 1884 թ. ամռանը Ա. Արփիարյանը և մի խումբ մտավորականներ (Լ. Բաշալյան, Բ. Քեչյան, Տ. Կամսարա-

⁴¹ «Մասիս», 14 հոկտեմբերի 1883:

⁴² «Շիրակ», 1905, № 5, էջ 33:

կան և ուրիշներ) հիմնադրում են «Արևելք» օրաթերթը: Նույն տարվա աշնանից «Մասիսը» գնում է հիշյալ խմբակը և լույս ընծայում որպես շաբաթաթերթ՝ Ա. Արփիարյանն խմբագրությամբ:

Ամրողը լինում է: Ոչ թե նշված մասվորականներն են հիմնել «Արևելք» օրաթերթը, այլ հատուկ վարչությունը, որի գլուխ էին կանգնած Կ. Սրվաճյանը և Հ. Նորատունկյանը⁴³: Այս վարչությունն է հրավիրել Ա. Արփիարյանին և մյուսներին՝ աշխատակցելու «Արևելքին»: Այսպիսով, «Արևելքը» ունեցել է ապրիլի անձանցից կազմված վարչական և խմբագրական մարմիններ: Այնուհետև, Կ. Սրվաճյանը «Մասիսը» գնել է ոչ թե հիշյալ «խմբակը» (այսինքն՝ Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը և ուրիշները), այլ «Արևելքի» վարչությունը⁴⁴: Եվ վերջապես, Ա. Արփիարյանը շաբաթաթերթ «Մասիսը» խմբագրել է ոչ թե 1884-ից, այլ 1887 թ. հունվարից⁴⁵:

Արանք են հիմնականում մեր դիտողությունները Հ. Պարոնյանի «Ծղկեցի ժողովածուի» ծանոթագրությունների վերաբերյալ: Նկատված թերությունների և վրիպումների, ինչպես և քննությունից գուրս մնացած մի շարք ծանոթագրությունների բովանդակությունը մեզ բերում է այն համոզման, որ Հ. Պարոնյանի «Ծղկեցի ժողովածուի» ծանոթագրումները կազմելիս գործի մեջ պետք է ներգրավել ոչ միայն բանասերների, այլև հայ հասարակական մտքի ու մամուլի պատմաբանների, XIX դարի Օսմանյան Թուրքիայի պատմությամբ և իրավունքի հարցերով զբաղվող մասնագետների, արվեստի պատմաբանների և տնտեսագետների: Այլ կերպ չի կարող լինել, որովհետև Հ. Պարոնյանը ներկայացնում է մի ամրող դարաշրջան՝ իր ամենաբազմազան կողմերի ամբողջության մեջ: Այդ դարաշրջանի իրական պատկերի և Հ. Պարոնյանի ստեղծագործության մեջ դրա արտացոլման սահմանահատկությունների բացահայտումը մնում է կարևոր խնդիր:

О КОММЕНТАРИЯХ «СОБРАНИЯ СОЧИНЕНИЙ» АКОПА ПАРОНЯНА

(Уточнения и дополнения)

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Собрание сочинений классика армянской литературы Акопа Пароняна в 10-ти томах (Ереван, изд-во АН АрмССР, 1962—1979) дает целостное представление о его литературном и публицистическом наследии. Однако в комментариях нашли место неточности и неаргументированные толкования. Выявление и устранение этих упущений способствовало бы повышению научного качества изданий произведений великого сатирика в дальнейшем.

⁴³ Տ. Արփիարյան. Հիշատակներ խմբագրական կյանքի. — (Լույս), 1908, № 6, էջ 179, № 13, էջ 426:

⁴⁴ Նոր կյանք, 1898, № 19, էջ 295—299:

⁴⁵ Ա. Արփիարյան. Անհետացող դեմքեր: Գրիգոր Զոհրապ, էջ 61: